# ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## Ազգային համաժողով 2022



# ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## Ազգային համաժողով 2022

29 նոյեմբերի, 2022

Ձեկույցը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

«Կին իրավապաշտպանները քայլեր են ձեռնարկում Հայաստանում գենդերային բռնության դեմ» (2020-2022 թթ.) ծրագիրն իրականացնում է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

© Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա

Երևան 2022

## Ներածություն

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան կազմակերպել էր ազգային համաժողով՝ «Գենդերային բռնության կանխարգելումը Հայաստանում» վերտառությամբ, որը տեղի ունեցավ 2022 թվականի նոյեմբերի 29-ին Երևանում Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող «Կին իրավապաշտպանները քայլեր են ձեռնարկում

գենդերային բռնության դեմ Հայաստանում» 2020-2022 թվականների ծրագրի շրջանակում:
Ավելի քան 100 մասնակիցներ հավաքվել էին մեկ հարկի տակ՝ քննարկելու առկա մարտահրավերները և օրենսդրական բացերը, որոնք ազդում են գենդերային հիմքով բռնության զոհերի, ներառյալ մարգինալ խմբերի կանանց վրա, ինչպես նաև քննարկելու գենդերային բռնության դեմ պայքարի և կանխարգելման ուղղությամբ մինչ օրս արձանագրված հաջողություններն ու առաջընթացը:

Համաժողովի խոսնակների թվում էին Հայաստանում Եվրոպական միության դեսպանը, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը, Ազգային ժողովի պատգամավորներ, փոխնախարարներ, քրեական արդարադատության վարչության ղեկավարներ, տարբեր նախարարությունների առանցքային

մասնագետներ և պետական մարմինների այլ ներկայացուցիչներ, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, որոնք ներկայացնում են ամբողջ Հայաստանից տարբեր մարգինալ խմբերի:

Սույն զեկույցի նպատակն է ներկայացնել համաժողովի տարբեր խոսնակների ելույթները և ամփոփել քննարկումներն ու առաջարկությունները:

Զեկույցը պատրաստված է համաժողովի ոգով՝ արձանագրելով բազմաթիվ դերակատարների կրկնվող կոչը, այն է՝ պետության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները պատրաստ են համագործակցելու և լայնածավալ ջանքեր գործադրելու գենդերային բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի ուղղությամբ:

## Ողջույնի խոսքեր

**Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի հաղորդակցության և արտաքին կապերի պատասխանատու Զարուհի Հովհաննիսյանը** ողջունեց և շնորհակալություն հայտնեց բոլոր գործընկերներին ազգային համաժողովին միանալու համար: Նա առանձնացրեց Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի՝ Եվրոպական միության աջակցությամբ վերջին երեք տարվա գործունեությունը:

**Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Ն.Գ. տկն. Անդրեա Վիկտորինը** նշեց, թե ինչպես է կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարը սկսվել որպես ակտիվիստների կողմից նախաձեռնվող տեղային ջանք և այժմ ներառում է ազգային և միջազգային շահագրգիռ կողմերին, որոնք գիտակցել են իրավիճակը բարելավելու համար միասին աշխատելու կարևորությունը: Տիկին Վիկտորինը նկարագրեց բռնության դրսևորումները հասարակական, ինստիտուցիոնալ, համայնքային և անհատական մակարդակներում: Նա խոսեց դեռևս լռության մատնված հանցանքի՝ հոգեբանական բռնության մասին, որին բախվում են շատ կանայք սխալ ընկալումների, կարծրատիպերի և վախի հետևանքով: Նա նաև նշեց, որ տունն այն վայրն է, որտեղ կանայք պետք է ապահով զգան, բայց, ցավոք, ամենաշատ բռնությունները տեղի են ունենում տան պատերի ներսում:

Տիկին Վիկտորինը բացատրեց, որ ԵՄ-ն վարում է գենդերային բռնության նկատմամբ զրոյական հանդուրժողականության քաղաքականություն, և կարևոր է, որ բոլոր շահագրգիռ կողմերը՝ եկեղեցիները, արհմիությունները, ընկերությունները, պայքարեն բռնության դեմ՝ սահմանելով նման քաղաքականություն և անցկացնելով պարտադիր դասընթացներ: Նա նշեց, որ իշխանությունները պարտավոր են պաշտպանել հասարակության առավել մարգինալացված բնակչությանը՝ բացատրելով, որ դա հրամայական է բազմակարծիք ժողովրդավարության պայմաններում:

Դեսպանը հայտնեց, թե որքան տպավորված է քաղաքացիական հասարակության ներգրավվածությամբ, և որ ԵՄ-ն կանգնած է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների

կողքին, երբ նրանց սպառնում են իրենց աշխատանքի համար: Նա կոչ արեց Հայաստանի Կառավարությանը՝ վավերացնելու Ստամբուլի կոնվենցիան, որն առաջարկում է բռնության դեմ պայքարի իրավական դաշտ: Տիկին Վիկտորինը կարծում է, որ անհրաժեշտություն կա պայքարելու Կոնվենցիայի շուրջը հյուսված առասպելների դեմ: Եզրափակելով դեսպանը խոսեց տղամարդկանց ներգրավելու կարևորության մասին՝ կրկնելով, որ ԵՄ-ն շարունակելու է աջակցել Հայաստանի՝ գենդերային բռնությանը վերջ տալու ջանքերին: «Դուք կարող եք հույս դնել մեզ վրա, մենք ձեզ կշարունակենք աջակցել այս ճանապարհին»,- իր խոսքն այսպես եզրափակեց դեսպանը:

**ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանն** իր ելույթում նշեց, որ արդարադատության նախարարությունը մեծ կարևորություն է տալիս գենդերային բռնության դեմ պայքարին, և որ Հայաստանի համար

առաջնահերթություն է գենդերային բռնության դեմ պայքարի օրենսդրական դաշտի համապատասխան կարգավորումներ ունենալը: Տիկին Սարգսյանը նշեց նաև, որ այս խնդրի համակողմանի լուծման համար մի շարք ուղղություններով համապարփակ գործողություններ են անհրաժեշտ, դրանց թվում են ՀՀ քրեական օրենսգրքում տեղ գտած փոփոխությունները: Անդրադառնալով նոր քրեական օրենսգրքին՝ նախարարի տեղակալը խոսեց դրանում հոգեբանական բռնության ներառման մասին՝ կարևորելով սոցիալապես մարգինալացված կանանց պաշտպանությունը:

Նախարարի տեղակալը նշեց, որ ի տարբերություն նախորդ քրեական օրենսգրքի՝ նոր օրենսգրքում ավելի շատ միջոցներ են ներառված գենդերային բռնության դեմ պայքարի համար: Տիկին Սարգսյանը նաև շեշտադրեց իրավահավասարության ապահովման և խտրականության արգելքի մասին օրենսդրության

պատշաճ իրականացման անհրաժեշտությունը: Այս կապակցությամբ նա նշեց նաև, որ արդարադատության նախարարությունն իր հանձնառությունն է հայտնել հավասարության ապահովման և խտրականության արգելքի մասին օրենսդրության նախագծերի մշակման վերաբերյալ:

Տիկին Սարգսյանը տեղեկացրեց, որ հաջորդ տարի Երևանում և Կապանում փորձարկվելու է Բառնահուսի մոդելը, որի շրջանակում բռնության ենթարկված անչափահասներին մեկ կենտրոնում կմատուցվեն արդարադատության մատչելիությանն առնչվող բոլոր ծառայությունները՝ բժշկական փորձաքննություններ, հարցաքննություններ: Փոխնախարարը հուսով է, որ դրա շնորհիվ հնարավոր կլինի խուսափել կրկնակի զոհականացումից:

Տիկին Սարգսյանն ընդգծեց արդարադատության ոլորտում կին ծառայողների ներգրավման խթանման անհրաժեշտությունը՝ նշելով, որ առաջին թիրախային ոլորտը պարեկային ծառայությունն է, որտեղ ավելացվելու է կին ծառայողների թիվը՝ այս փորձը տարածելով նաև այլ ոլորտների վրա:

**Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան Քրիստինե Գրիգորյանը** շնորհակալություն հայտնեց կին իրավապաշտպաններին՝ տարիներ շարունակ գենդերային բռնության խնդիրը Կառավարության օրակարգում պահելու համար: Նա նշեց, որ չնայած բազմաթիվ բարելավումներին՝ նոր մարտահրավերներ շարունակաբար հայտնվում են տեխնոլոգիաների, քաղաքականության, Քովիդ-19-ի և զինված հակամարտությունների պատճառով, որոնք

բոլորն էլ մեծացնում են գենդերային բռնության հավանականությունները: Մարդու իրավունքների պաշտպանը հիշեցրեց սեպտեմբերին տեղի ունեցած բարբարոսությունները կին զինվորականների նկատմամբ:

Տիկին Գրիգորյանն ասաց, որ Ստամբուլյան կոնվենցիայի վավերացումը և քրեական օրենսգրքի բարեփոխումները առաջնահերթություն են Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի համար, որը մշտադիտարկում է նոր քրեական օրենսգրքի դրույթների կիրառումը՝ կարևորություն տալով գենդերային հիմքով բռնության գործերին:

Պաշտպանը կարծում է, որ թեև կարևոր փոփոխություններ են կատարվել, բայց ավելի շատ աշխատանք կա անելու, որպեսզի, օրինակ, նախկին ամուսնու, զուգընկերոջ և նախկին զուգընկերոջ

կողմից կիրառված բռնությունը պատժվի: Նա նաև կարծում է, որ սեռական ոտնձգությունները և սեռական հետամտումը պետք է ներառվեն քրեական օրենսգրքում, քանի որ դրանք տարածված են աշխատավայրում, սակայն բացակայում են այդ խնդրի լուծման ինստիտուցիոնալ մեխանիզմները:

Բանախոսն անդրադարձավ նաև կին իրավապաշտպանների առցանց թիրախավորումներին, կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ հասարակական արձագանքին, ինչպես նաև անընդունելի «հումորների» դրսևորումներին, որոնք փաստացի արդարացնում են բռնությունը:

**Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ծրագրի ղեկավար Լիանա Ամիրբեկյանն** իր ելույթում ընդգծեց գենդերային բռնության խնդրի շուրջ համագործակցության կարևորությունը: Թեև այս խնդրի լուծմանը նվիրված մարդկանց թիվը գնալով ավելանում է, սակայն, ըստ տիկին Ամիրբեկյանի, հրամայական է, որ ավելի շատ մարդիկ ներգրավվեն: Բանախոսն անդրադարձավ գենդերային բռնության դեմ պայքարի դրական փոփոխություններին՝ ընդգծելով Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի աշխատանքը՝ մասնագիտական ուսուցում տրամադրելու և այս խնդրի շուրջ իրազեկման արշավներ կազմակերպելու, ինչպես նաև ամբողջ երկրում զոհերին աջակցելու ուղղությամբ: ԵԽ գրասենյակի ներկայացուցիչը նաև նշեց, որ չնայած դրական փոփոխություններին՝ դեռ երկար ճանապարհ կա անցնելու գենդերային հիմքով բռնությունը վերացնելու ուղղությամբ՝ այդ ճանապարհին կարևորելով Ստամբուլյան կոնվենցիայի վավերացումը:

**Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի հաղորդակցության և արտաքին կապերի պատասխանատու Զարուհի Հովհաննիսյանը,** ամփոփելով ողջույնի խոսքերը, ներկայացրեց Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի ստեղծման պատմությունն ու գործունեությունը: Բանախոսը նշեց, որ կոալիցիան կարևորում է նաև մարգինալ խմբերի կանանց իրավունքները, ինչպիսիք են դատապարտված կանայք, ՄԻԱՎ-ով ապրող կանայք, թմրանյութեր օգտագործող կանայք, հաշմանդամություն ունեցող կանայք, նույնասեռական կանայք, որոնք հաճախ կրկնակի խտրականության են ենթարկվում: Տիկին Հովհաննիսյանը կարևորեց ընտանեկան բռնության կանխարգելման վերաբերյալ ազգային օրենսդրության առկայությունը՝ ընդգծելով, որ օրենքում կան բացեր, որոնք արձանագրվում են կոալիցիայի զեկույցներում: Նա նաև կարևորեց Եվրոպական միության հետ համագործակցությունը՝ շեշտադրելով, որ կանայք են շարժման կենտրոնում, և նրանց շնորհիվ է գրանցվում առաջընթաց:

## Քննարկում 1.

## Ընտանեկան բռնության կանխարգելման և արձագանքման ոլորտում առկա մարտահրավերները և դրանց հաղթահարման հնարավորությունները Հայաստանում

Քննարկման մոդերատոր, **«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպության շահերի պաշտպանության և քաղաքականության**

**մշակման թիմի համակարգող Աննա Հովհաննիսյանը** սկսեց առաջին պանելային քննարկումը՝ ընդգծելով 2017 թվականից հետո արձանագրված առաջխաղացումները, մասնավորապես ընտանեկան բռնության վերաբերյալ օրենսդրության ընդունումը, նոր քրեական օրենսգիրքը և մարզերում աջակցության կենտրոնների ստեղծումը, որոնք մասամբ սուբսիդավորվում են պետության կողմից: Միևնույն ժամանակ նա հայտարարեց, որ Հայաստանում կանայք շարունակում են բախվել այնպիսի խնդիրների, ինչպիսին է աշխատավայրում սեռական ոտնձգությունը, կանանց պաշտպանության իրավական շրջանակների և քաղաքականության բացակայության պատճառով: Հովհաննիսյանը կարևորեց այն հարցը, որ քրեական արդարադատության ներկայացուցիչները դեռևս չեն ցուցաբերում զոհակենտրոն մոտեցում գենդերային բռնության դեպքերի նկատմամբ:

**«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Մարո Մաթոսյանը** խոսեց կենտրոնի աշխատանքների, այդ թվում՝ ոստիկանության և սոցիալական աշխատողների համար ստեղծված ուղեցույցների մասին: Նա ուրախությամբ տեղեկացրեց, որ կենտրոնի ստեղծած ուղեցույցը աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ներառելու է ուսումնական ծրագրերում:

Տիկին Մաթոսյանը հպարտությամբ նշեց, որ «Կանանց աջակցման կենտրոնը» ղեկավարում է ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար նախատեսված երկու ապաստարանների աշխատանքը, ինչպես նաև վերապատրաստել է նորաստեղծ աջակցման կենտրոնների բոլոր աշխատակիցներին և ծառայություններ մատուցողներին: «Կանանց

աջակցման կենտրոնի» ղեկավարը կարծում է, որ մեծ առաջընթաց է արձանագրվել այն ժամանակից ի վեր, երբ ընդունվել է ընտանեկան բռնության վերաբերյալ օրենքը, քանի որ պետական մարմիններն այժմ ավելի պատրաստակամ են՝ աշխատելու այդ հարցի շուրջ: Դրա օրինակն է աջակցման կենտրոնների և ոստիկանների միջև երկխոսության հաստատումը և աշխատանքային խմբի ստեղծումը: Տիկին Մաթոսյանը նաև ողջունեց իշխանությունների քայլերը համակարգային փոփոխություններ կատարելու ուղղությամբ:

**«Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության համահիմնադիր Արման Ղարիբյանն** իր ելույթը սկսեց ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցչի խոսքին արձագանքելով՝ նշելով, որ քաղհասարակության աշխատանքի շնորհիվ ներկայում բավարար թվով բռնության ենթարկված կանայք դիմում են իրենց իրավունքների խախտման փաստերով պետական

մարմիններին, և պարզվել է, որ պետությունը պատրաստ չէ ապահովելու այդ թվով կանանց իրավունքների պաշտպանությունը: Պարոն Ղարիբյանը, հղում կատարելով կազմակերպության կատարած մշտադիտարկման արդյունքներին, նշեց, որ բռնության ենթարկված կանանց արդարադատության իրավունքը խախտվում է Հայաստանում, քանի որ դատավորները, քննիչներն ու ոստիկանները բավարար պատրաստված չեն ընտանեկան բռնության գործեր քննելու համար: «Երբեմն ստեղծվում են իրավիճակներ, երբ բռնության ենթարկված կանանց համար վտանգավոր է դառնում գնալ ոստիկանական, քննչական բաժիններ»,- նշեց պարոն Ղարիբյանը:

Ըստ բանախոսի՝ երկար ձգձգվող դատաքննությունների հետևանքով շատ քրեական գործեր պարզապես կարճվել են արարքի վաղեմության ժամկետը լրանալու հիմքով: Ղարիբյանը ողջունեց նոր քրեական օրենսգրի փոփոխությունները վաղեմության

ժամկետների ավելացման մասով՝ հույս հայտնելով, որ վաղեմության ժամկետի պատճառով այլևս չի կարճվի ընտանեկան բռնության գործերի քննությունը:

Մշտադիտարկում իրականացնող իրավապաշտպանը խորհուրդ տվեց հնարավորինս սեղմ ժամկետում քննել ընտանեկան բռնության գործերը՝ օրինակ բերելով այն նախադեպը, երբ գործի քննությունն ավարտվել է ընդամենը մեկ դատական նիստի ընթացքում: Պարոն Ղարիբյանը նաև առաջարկեց ստեղծել մասնագիտացված դատարաններ կամ առանձնացնել դատավորների կազմեր, որոնք կքննեն ընտանեկան բռնության գործեր: Պարոն Ղարիբյանն առաջարկեց բռնության կրկնությունից խուսափելու նպատակով դատարաններում ունենալ առանձնացված սպասասրահներ, որտեղ բռնության զոհը անվտանգ պայմաններում կսպասի դատական նիստի մեկնարկին, ինչպես նաև սահմանել դատական դահլիճը լքելու ընթացակարգեր. նախ թույլ տալ, որ կինը հեռանա, ապա՝ բռնարարը: Անդրադառնալով օրենսդրական բարեփոխումներին՝ բանախոսն առաջարկեց հրաժարվել տուգանքներից և ընտանեկան բռնության գործերով սահմանել միայն ազատազրկմանն առնչվող պատիժներ:

**Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի հաղորդակցության և արտաքին կապերի պատասխանատու Զարուհի Հովհաննիսյանը** ներկայացրեց ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցման կենտրոնների առջև ծառացած խոչընդոտների վերաբերյալ իր կատարած ուսումնասիրության արդյունքները: Տիկին Հովհաննիսյանը սկսեց նկարագրելով, թե ինչպես է 2020 թվականին մեկնարկել աջակցման կենտրոնների գործունեությունը ՀՀ բոլոր մարզերում: Բանախոսն

ընդգծեց, որ աջակցման կենտրոնները չունեն բավարար ֆինանսական միջոցներ, պետության տրամադրած ֆինանսավորումը չի ծածկում բոլոր անհրաժեշտ ծախսերը: Այդ բացը լրացնում են այն հասարակական կազմակերպությունները, որոնք ղեկավարում են կենտրոնների գործունեությունը, նրանք այլ ծրագրերից համաֆինանսավորում են աջակցման կենտրոնների, այդ թվում՝ շուրջօրյա թեժ գիծ ծառայության աշխատանքը:

Աջակցման կենտրոնները նաև համապատասխան մասնագետների պակաս ունեն, քանի որ մարզերում հաճախ պարզապես չկան ընտանեկան բռնության ոլորտում վերապատրաստված հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, փաստաբաններ: Այս բացը փորձում է լրացնել «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ վերապատրաստելով մարզային կենտրոնների աշխատակիցներին:

Տիկին Հովհաննիսյանը նշեց, որ թեև բարելավվել է ՀՀ ոստիկանության և աջակցման կենտրոնների համագործակցությունը, այդ ուղղությամբ դեռևս բարեփոխումների անհրաժեշտություն կա:

## Քննարկում 2.

## Գենդերային բռնության համակարգային և փոխհատվող խնդիրները Հայաստանում:

**«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Անուշ Պողոսյանը** ներկայացրեց երկրորդ պանելային քննարկման հիմնախնդիրները, մասնավորապես՝ կնասպանությունը, սեռական բռնությունը, ինչպես նաև տարբեր խմբերի կանանց նկատմամբ գենդերային

բռնության դրսևորումները: Նա կարևորեց գենդերային բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի ինտերսեկցիոնալ մոտեցում ցուցաբերելը: Տիկին Պողոսյանը հպարտությամբ նշեց, որ CEDAW կոմիտեն ընդունել է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի բազմաթիվ առաջարկությունները և դրանց հիման վրա հատուկ հանձնարարականներ է ուղղել պետությանը:

**Եվրոպական և միջազգային համեմատական իրավունքի մասնագետ Ստելլա Զանդիրյանը** ներկայացրեց իր պատրաստած՝ կնասպանության զեկույցը՝ բացատրելով, թե ինչու ենք գործածում «կնասպանություն» եզրույթը «սպանության» փոխարեն: Մասնագետը նշեց, որ «սպանությունը» գենդերային առումով չեզոք հասկացություն է և չի արտացոլում խտրական մոտեցումը զոհի նկատմամբ, իսկ «կնասպանությունը» կամ «ֆեմիցիդը» ընդգծում է, որ սպանությունը տեղի է ունեցել գենդերային հիմքով խտրականության և բռնության հետևանքով:

Տիկին Զանդիրյանը պնդեց, որ մենք համակարգային մոտեցում չունենք կնասպանության նկատմամբ, և որ պետությունը չեզոք դիրքորոշում է ցուցաբերում, անգամ չի վարվում պատշաճ պաշտոնական վիճակագրություն, ինչը դժվարացնում է կնասպանության վերաբերյալ տեղեկությունների հավաքումը:

Տիկին Զանդիրյանը շարունակեց՝ հավելելով, որ ՀՀ օրենսդրությունում բացակայում է «կնասպանություն» հասկացությունը, և որ կնասպանության գործեր քննող դատավորները կարող են թույլ տալ, որ այդ գործերով հաշվի առնվեն մեղմացուցիչ հանգամանքներ: Նա բերեց մեղմացուցիչ հանգամանքների օրինակներ, այդ թվում՝ հանցագործի երիտասարդ տարիքը, հանցանքի համար զղջալը, նաև մինչև 14 տարեկան երեխայի խնամակալ լինելը, նույնիսկ այն դեպքերում, երբ երեխան երկար տարիների ընթացքում ականատես է եղել ընտանեկան բռնության: Վերջապես բանախոսն ընդգծեց, որ կնասպանության զոհերը չեն կարող պաշտպանել իրենց իրավունքները, ինչն ավելի կարևոր է դարձնում պետության կողմից այս խնդրի վերաբերյալ ավելի կոշտ դիրքորոշում ցուցաբերելը և կանխարգելման ավելի մեծ մեխանիզմներ ստեղծելը:

**«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Տաթևիկ Աղաբեկյանն** իր ելույթում ընդգծեց, որ սեռական բռնությունը դեռևս չի ընկալվում հասարակության կողմից, և դրա պատճառներից մեկը սեռական կրթության բացակայությունն է: Նա շարունակեց՝ ասելով, որ թեև 2010 թվականից ի վեր ընտանեկան բռնություն վերապրածները բարձրաձայնում են հանցագործությունների մասին, սակայն սեռական բռնության ենթարկված անձինք

դեռևս պատրաստ չեն խոսելու իրենց հետ կատարվածի մասին: Տիկին Աղաբեկյանը նշեց, որ եթե սեռական բռնության զոհը կին է, հասարակությունը նրան է մեղադրում, իսկ եթե անչափահասն է զոհը, ապա դարձյալ կնոջը՝ բռնության ենթարկվածի մորն են մեղադրում երեխային սխալ դաստիարակելու համար:

Տիկին Աղաբեկյանը ներկայացրեց, որ սեռական բռնության զոհերի տրավման տարբերվում է այլ տեսակի բռնությունների ենթարկվածների տրավմայից, և որ վերականգնումը կարող է տևել երկար տարիներ: Ըստ բանախոսի՝ բռնության ենթարկված անչափահասների գործերով լուծում գտնելու համար պետությունը դիմում է «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնին»՝ հաշվի առնելով մեխանիզմների բացակայությունը:

Տիկին Աղաբեկյանը շարունակեց՝ խոսելով այն մասին, որ սեռական բռնության գործերով զբաղվող պետական

մարմինները չեն ցուցաբերում զոհակենտրոն մոտեցում, ինչպես նաև վիճակագրություն չկա սեռական բռնության գործերի վերաբերյալ: Նա պնդեց, որ վիճակագրության բացակայությունը դժվարացնում է իրավիճակն ու հարցի շրջանակը հասկանալը: Հաշվի առնելով գաղտնիությանն առնչվող խնդիրները՝ տիկին Աղաբեկյանը նշեց, որ Հայաստանում սեռական բռնության ենթարկված կանայք հիմնականում խուսափում են բժշկական օգնությունից, և եթե անգամ դիմում են իրավապահներին, ապա նաև՝ դատաբժիշկներին, ապացույցների հավաքումը բարդանում է համապատասխան գործիքակազմի բացակայության պատճառով:

**«Իրական աշխարհ, Իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ Ժենյա Մայիլյանը** խոսեց ՄԻԱՎ-ով ապրող կանանց և ներերակային թմրամիջոց օգտագործող կանանց նկատմամբ գենդերային բռնության դրսևորումների

մասին: Նա ներկայացրեց առաջին համապարփակ հետազոտության արդյունքները, որն իրականացրել է կազմակերպությունը: Տեղեկությունների հավաքումը բարդ է եղել՝ հաշվի առնելով, որ այս համայնքները մտահոգված են, որ իրենց մասին տեղեկությունները կարող են հասանելի դառնալ իրենց ընտանիքներին, լայն հանրությանը կամ իրավապահ մարմիններին: Բանախոսն ասաց, որ կանայք հարցազրույցների ժամանակ պատմել են բռնության ենթարկվելու վերաբերյալ իրենց պատմությունները, որոնց մասին նախկինում երբեք չեն խոսել, և չեն դիմել իրավապահներին մի շարք գործոնների պատճառով, այդ թվում՝ քիչ վստահություն ունենալով, որ պետական մարմինները կաջակցեն իրենց:

Ավելին՝ տիկին Մայիլյանը տեղեկացրեց, որ ՄԻԱՎ-ով ապրող կանայք ունեն հոգեբանական խնդիրներ

և վախ, այդ պատճառով նրանք հազվադեպ են իրենց կարգավիճակը հայտնում ընտանիքի անդամներին կամ ծառայություններ մատուցողներին: Նա նաև նշեց, որ ներերակային թմրամիջոցներ օգտագործող կանանց վերաբերյալ վիճակագրությունը թերի է, և որ այդ կանայք մնում են խիստ մեկուսացված և կախված իրենց զուգընկերներից՝ բախվելով աննկարագրելի բռնության: Տիկին Մայիլյանը նշեց, որ ապաստարանների և աջակցման կենտրոնների համար ներդրված վերջին օրենսդրական փոփոխություններում գործածվում են կարծրատիպային ձևակերպումներ թմրամիջոցներ օգտագործողներին բնութագրելու համար՝ այդպիսով նրանց նկատմամբ խտրական վերաբերմունք ցուցաբերելով և հետ պահելով նրանց աջակցություն փնտրելուց:

**«Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոնի ծրագրերի ղեկավար Գայանե Գրիգորյանը** խոսեց այն մասին, որ հաշմանդամություն ունեցող կանայք բախվում են բազմաթիվ մարտահրավերների, որոնց լուծումը պահանջում է համակարգային մոտեցում: Ըստ բանախոսի՝ Միասնական սոցիալական ծառայությունը պատշաճ կերպով չի գործում հաշմանդամություն ունեցող կանանց աջակցելու համար: Նա հավելեց, որ իրենց կազմակերպության կատարած հետազոտությունը ցույց է տալիս, որ հաշմանդամություն ունեցող կանայք ավելի խոցելի են գենդերային հիմքով բռնության ենթարկվելու առումով: Տիկին Գրիգորյանը նշեց, որ հաշմանդամություն ունեցող կանայք հաճախ չեն կարողանում կրթություն ստանալ կամ աշխատանքի անցնել ընտանիքում առարկությունների պատճառով, և որ շատ դեպքերում մայրերն են բռնություն գործողները, քանի որ նրանք

են սովորաբար հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների խնամողները:

Տիկին Գրիգորյանը հավելեց, որ հատկապես սեռական բռնությունը տարածված է մտավոր և զարգացման խնդիրներ ունեցող կանանց շրջանում: Նա տեղեկացրեց, որ «Ագաթ»-ի շահառուներից շատերը գենդերային բռնության վերաբերյալ պատշաճ իրազեկված չեն և հաճախ չեն ընդունում, որ իրենք բռնության զոհ են: Բանախոսը պնդեց, որ կարիք կա ավելի շատ ռեսուրսների, ինչպիսիք են դյուրընթեռնելի ձեռնարկները, լսողության խանգարումներ ունեցող կանանց համար թեժ գծի ծառայությունները և կենտրոններում պատշաճ պայմանները:

Համակարգային խնդիրների վերաբերյալ նա նշեց, որ պետությունը պետք է մատուցի այնպիսի ծառայություններ, ինչպիսին է ժեստերի լեզվի թարգմանությունը, և ոչ թե այդ կարիքը հոգալու համար հենվի հասարակական կազմակերպությունների վրա:

**«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ Լիլիթ Ավետիսյանն** իր ելույթում նշեց, որ լեսբի, բիսեքսուալ և տրանս (ԼԲՏ) կանայք խուսափում են իրենց հետ տեղի ունեցած բռնության մասին խոսելուց: Նա նշեց, որ տրանս և ինտերսեքս անձինք հաճախ դուրս են մնում բռնության ենթարկված կանանց համար նախատեսված աջակցության ծրագրերից:

Տիկին Ավետիսյանը օրինակներ բերեց, թե ինչպես են տրանս անհատները ոտնձգությունների ենթարկվել աշխատավայրում, փողոցում, հասարակական վայրերում: Եղել են դեպքեր, երբ ԼԲՏ կանանց ոստիկանությունում սպառնացել են, թե կհանրայնացնեն նրանց սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը, և այդպիսով ստիպել են հետ վերցնել իրենց գանգատները:

Բանախոսը պնդեց, որ հիմնական պատճառը, որ

ԼԲՏ կանայք աջակցություն չեն փնտրում գենդերային բռնության ենթարկվելիս, այն է, որ նրանք խուսափում են ոստիկանության հետ շփումներից և մտավախություն ունեն, որ իրենց կնվաստացնեն նաև դատարանում:

## Քննարկում 3.

## Գենդերային բռնության դեմ ուղղված պայքարի իրավական շրջանակը Հայաստանում

Քննարկման մոդերատոր **Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի հաղորդակցության և արտաքին կապերի պատասխանատու Զարուհի Հովհաննիսյանը** բացման խոսքում նշեց, որ ընտանեկան բռնության

դեմ պայքարի իրավական դաշտում առանցքային դերակատարում ունի ոստիկանությունը, քանի որ ոստիկանները բռնության ենթարկվելու դեպքերին առաջին արձագանքողներն են, ինչպես նաև ունեն լայն լիազորություններ և պատասխանատվություն:

**ՀՀ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության պետի տեղակալ, անչափահասների հանցավորության և ընտանեկան բռնության կանխարգելման վարչության պետ Էդգար Պետրոսյանը** ներկայացրեց, թե ոստիկանությունն ինչ է արել ընտանեկան բռնության կանխարգելման ուղղությամբ, ինչ է անում, և դեռ ինչ անելիքներ կան: Նա նկարագրեց սերտ համագործակցությունը Կանանց աջակցման կենտրոնի հետ՝ ոստիկանության հարցաթերթի ձևանմուշը վերանայելու և ուղղորդման մեխանիզմները հստակեցնելու ուղղությամբ: Պարոն Պետրոսյանը խոսեց նաև օրենսդրական փոփոխությունների մասին, որոնք կբարելավեն ոստիկանության աշխատանքը:

Ոստիկանության ներկայացուցիչը քաղաքացիական հասարակությանն ավելի սերտ համագործակցության կոչ արեց, հատկապես խնդիրների հավաքման ուղղությամբ: Պարոն Պետրոսյանը նաև կարևորեց տղամարդկանց ներգրավվածությունը ընտանեկան բռնության դեմ պայքարում:

**Դատական դեպարտամենտի իրավական ակտերի մշակման և փորձաքննության վարչության իրավական ակտերի մշակման և փորձաքննության բաժնի պետ Մարիանա Դանիելյանը** նշեց, որ դատական դեպարտամենտը ընտանեկան բռնության գործերի վերաբերյալ վիճակագրություն չի վարում, քանի որ առկա չէ դրա վերաբերյալ Կառավարության որոշում: Ինչ վերաբերում է դատարանների ու դատավորների ենթամասնագիտացումների վերաբերյալ առաջարկին, տիկին Դանիելյանը նշեց, որ նման նախաձեռնությամբ հանդես գալուց առաջ անհրաժեշտ է վիճակագրական տվյալներ ունենալ, մասնավորապես 3-5 տարվա կտրվածքով պետք է ուսումնասիրվի, թե ընտանեկան բռնության վերաբերյալ քանի գործ է քննում մեկ դատավորը, որպեսզի հասկանանք, թե ինչ ծանրաբեռնվածություն կունենա դատավորը, եթե մասնագիտանա միայն ընտանեկան բռնության գործերի քննության ոլորտում:

Տիկին Դանիելյանը կարծում է, որ սխալ ընկալում կա, թե դատական մարմինները բաց չեն համագործակցության համար: Նա առաջարկեց որպես միջանկյալ միջոց դատավորների վերապատրաստումներ անցկացնել, քանի դեռ չկա որոշում մասնագիտացված դատարանների ստեղծման վերաբերյալ: Անդրադառնալով դատական նիստի ընդմիջման ընթացքում բռնության զոհի և

բռնարարի՝ նույն տարածքում գտնվելու հարցին՝ տիկին Դանիելյանը նշեց, որ կարելի է դատական նիստերի կարգադրիչների համար կանոններ նախատեսել, որպեսզի հետևողական լինեն ընտանեկան բռնության գործերով և համապատասխան վարվելակերպ դրսևորեն կողմերի նկատմամբ: Դատական դեպարտամենտի ներկայացուցիչն ընդգծեց, որ ցանկացած փոփոխություն պետք է սկսել փաստաթղթի, օրենքի ընդունումից:

**«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության քրեական գործերով փաստաբան Զարուհի Մեջլումյանը** նշեց, որ և՛ օրենսդրությունը, և՛ դրա կիրառումը բարեփոխումների կարիք ունեն: Նա անդրադարձավ քրեական օրենսգրքի փոփոխություններին, դրանց համաձայն՝ որպես արարքը ծանրացնող հանգամանք ներառվել է մերձավոր ազգականի կողմից կատարված լինելը, սակայն ըստ փաստաբանի՝ դա չի լուծում ընտանեկան

բռնության խնդիրը, որը հիմնված է վերահսկման և իշխանության գաղափարի վրա:

Նա պնդեց, որ անհրաժեշտ է վիճակագրական տվյալներ հավաքել կասեցված կամ կարճված գործերի վերաբերյալ, քանի որ կարճված գործերի մեծ մասը, իր դիտարկմամբ, կարճվում է կեղծ հաշտության կամ երեխաներին առնչվող խնդիրների պատճառով:

Տիկին Մեջլումյանն անդրադարձավ նաև հարցաքննությունները հեռավար անցկացնելու անհրաժեշտությանը: Նա նշեց, որ առերես հարցաքննությունները հաճախ հոգեբանական լուրջ խնդիրներ են առաջացնում բռնության ենթարկված կանանց շրջանում: Այսպիսի և բազմաթիվ պրակտիկ խնդիրներ է արձանագրել փաստաբանն իր ամենօրյա աշխատանքում: Նա ավելացրեց՝ օրենսդրական բարեփոխումները ողջունելի են, սակայն առավել կարևոր է դրանց արդյունավետ կիրառումը:

**ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Շուշանիկ Իսրայելյանն** անդրադարձավ ընտանեկան բռնության գործերը հանրային մեղադրանքի շրջանակում քննելու փոփոխությանը, որը հնարավորություն է տալիս իրավապահներին քրեական գործ հարուցելու և քննելու այն տուժողի բողոքի բացակայության պայմաններում: Սա կարևոր փոփոխություն է, քանի որ բռնության ենթարկված կանանց նկատմամբ հսկայական ճնշում է գործադրվում, որպեսզի նրանք բողոք չներկայացնեն, իսկ դա անելու դեպքում՝ հրաժարվեն բողոքից:

Նա նշեց՝ իրենց կատարած ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դատախազների վերապատրաստումն արդյունք տվել է, սակայն կարևոր է, որ դասընթացները լինեն ոչ թե մեկանգամյա, այլ շարունակական:

## Քննարկում 4.

## Գենդերային բռնության կանխարգելման հնարավորությունները Հայաստանում

Քննարկման մոդերատոր **«Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոնի ծրագրերի ղեկավար Գայանե Գրիգորյանը** ներկայացրեց բանախոսներին և թեման, այն է՝ գենդերային բռնությունը նվազեցնելու և բռնության ենթարկված անձանց

աջակցելու հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում:

**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյանն** իր խոսքում նշեց, որ Հայաստանում արդեն կա կոնսենսուս ընտանեկան բռնության խնդրի լուծման անհրաժեշտության շուրջ, բոլորը շահագրգռված են բռնությունը նվազեցնելու, վերացնելու հարցում: Տիկին Բաթոյանն անդրադարձավ օրենսդրական փոփոխությունների փաթեթին, որը կոչված է լուծելու իրավակիրառ պրակտիկայում հանդիպող խնդիրները: Պատգամավորը նշեց, որ ընտանեկան բռնության մասին օրենքի ուժի մեջ մտնելուց հետո առաջին անգամ է օրենսդրությունը նման փոփոխությունների ենթարկվելու:

Տիկին Բաթոյանն ընդգծեց իրազեկության բարձրացման և կարողությունների զարգացման անհրաժեշտությունը, ինչպես նաև մշտադիտարկման և կանխարգելման մեխանիզմների հզորացումը:

Պատգամավորը համոզված է, որ օրենքում հաշտեցման վերաբերյալ կետը պետք է վերացնել և ընդլայնել տուժածներին տրամադրվող բժշկական օգնությունը: Բանախոսը նշեց, որ հասարակական կազմակերպությունների ներկայացրած առաջարկների գերակշիռ մեծամասնությունն ընդունվել է իրենց կողմից, և դրանք արտացոլվելու են օրենսդրական փոփոխություններում:

**ՀՀ ԿԳՄՄՆ հանրակրթության վարչության գլխավոր մասնագետ Անահիտ Մուրադյանն** իր ելույթը սկսեց ուսուցիչների վերապատրաստման և դպրոցական ծրագրերում գենդերային զգայունության ապահովման ուղղությամբ աշխատանքների մասին խոսելով: Նա նշեց, որ դպրոցն է այն վայրը, որտեղ երեխաները պետք է սովորեն իրենց իրավունքները, օրենքները, ինչպես նաև հստակորեն ընկալեն «ընտանեկան բռնություն» երևույթը: Անդրադառնալով բռնության կանխարգելման խնդրին՝ տիկին Մուրադյանը ներկայացրեց «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որը 17 ժամ տևողությամբ պարտադիր դասընթաց է բոլոր հանրակրթական դպրոցներում: Նպատակն է երեխաներին տրամադրել կյանքի մարտահրավերները հաղթահարելու սոցիալական գիտելիքներ: Միջազգային կազմակերպությունները ներգրավված են եղել ուսումնական ծրագրի մշակման և ուսուցիչների վերապատրաստման գործում: Տիկին Մուրադյանը հավաստիացրեց, որ «Առողջ ապրելակերպ» դասընթացում ընդգրկված բոլոր թեմաներում մեծ շեշտադրում կա գենդերային զգայունության վրա:

Բանախոսը նշեց, որ դպրոցները չունեն բռնության դեպքերը բացահայտելու և ուղղորդելու մեխանիզմներ և ոչ էլ այդպիսի իրավասություն: Նա կարծում է, որ պետք

է լինի համակարգ՝ վերահսկելու այն երեխային, որը 10 օր անընդմեջ դպրոց չի հաճախում և դուրս է մնում դպրոցական համակարգից, քանի որ հավանական է, որ նա անտեսված է կամ բռնության է ենթարկվում:

**ՀՀ առողջապահության ազգային ինստիտուտի ներկայացուցիչ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովի (ՄՀՀ) քարտուղարության ֆինանսական և վարչական հարցերով մասնագետ Գրետա Հարությունյանն** իր խոսքում նշեց, որ ՄՀՀ-ն ակտիվ համագործակցում է ոլորտային հասարակական կազմակերպությունների հետ: Տիկին Հարությունյանը տեղեկացրեց, որ այս տարի ընդունվել է որոշում, համաձայն որի՝ ՄԻԱՎ կարգավիճակն ու ոչ մանրէազատ տուբերկուլյոզը հանվել են այն հիվանդությունների ցանկից, որոնք անձին ապաստարանում ընդունելու խոչընդոտ են դառնում:

**ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ Անի Սահակյանն** անդրադարձավ նախարարության ներքո գործող Միասնական սոցիալական ծառայության աշխատանքին՝ նշելով, որ ՄՍԾ աշխատակիցը պետք է ուղղորդող և համագործակցային գործառույթներ իրականացնի բռնության ենթարկված անձանց աջակցելու նպատակով:

Տիկին Սահակյանը ներկայացրեց նախարարության կողմից ֆինանսավորվող ծրագրերը, որոնցով ապահովվում է հոգեբանական և իրավաբանական աջակցություն, դրամական աջակցություն 50-150 հազար դրամի չափով՝ առաջնային կարիքները հոգալու համար, ինչպես նաև ապաստարանի ծառայությունը: Նախարարությունը բռնության կանխարգելման

նպատակով ավելի շատ ուշադրություն կդարձնի կանանց տնտեսական հզորացմանը, այս նպատակով 2023 թվականից 3 մարզում պիլոտային ծրագիր է իրականացվելու:

## Փակման խոսք

**Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի հաղորդակցության և արտաքին կապերի պատասխանատու Զարուհի Հովհաննիսյանը** շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին՝ ընդգծելով, որ քննարկմանը ներկա են եղել պետական բոլոր այն գերատեսչություններից ներկայացուցիչներ, որոնք այս կամ այն կերպ առնչվում են գենդերային բռնության խնդրին: Տիկին Հովհաննիսյանն իր խոսքն ավարտեց դրական ազդակով՝ պնդելով, որ համաժողովի ամփոփմամբ համագործակցությունը չի ավարտվում, այլ նոր փուլ է թևակոխում: